

ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) կողմից Ապահովադրից (Ապահովադրի լիազորված անձից) պահանջվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

Իրավաբանական անձանց համար՝

- ա) պետական գրանցման վկայականի պատճենը,
- բ) բանկային հաշվեհամարի տվյալները,
- գ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցի ավտոմեքենայի գրանցման վկայագիրը (կամ պատճենը),
- դ) կնիքը,
- ե) եթե իրավաբանական անձի անունից հանդես է գալիս լիազորված անձը՝ համապատասխան լիազորագիր և լիազորված անձի անձնագիր,
- զ) եթե ԱՊՊԱ պայմանագրում նշվելու են լիազորված վարորդներ, ապա վերջիններիս՝
 - անձնագրերը,
 - վարորդական իրավունքի վկայականները,
 - սոցիալական քարտերը (առկայության դեպքում):

Ֆիզիկական անձանց համար

- ա) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալի անձնագիրը (բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթուղթ),
- բ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալի սոցիալական քարտը (կամ տեղեկանք սոցիալական քարտ չունենալու մասին),
- գ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալի վարորդական իրավունքի վկայականը,
- դ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայագիրը (կամ պատճենը),
- ե) եթե Ապահովադրի կողմից հանդես է գալիս լիազորված անձը՝ համապատասխան լիազորագիր և լիազորված անձի անձնագիր,
- զ) եթե ԱՊՊԱ պայմանագրում նշվելու են լիազորված վարորդներ, ապա վերջիններիս՝
 - անձնագրերը,
 - վարորդական իրավունքի վկայականները,
 - սոցիալական քարտերը (առկայության դեպքում):

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԵՐԱԿՆՔԵԼՈՒ (ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնցում տեղի չեն ունեցել որևէ փոփոխություններ: